ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

№ 1112/3283-22
26.01.2022

Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ
հեռ.՝ 041 563363, էլ. հասցե՝ armenmirzoiian@gmail.com
«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի լրագրող
Արմեն Միրզոյանին

Հարգելի՛ պարոն Միրզոյան

Ի պատասխան ՀՀ վարչապետին ուղղված հունվարի 21-ի Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ այս պահին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցերով կողմերի հատուկ ներկայացուցիչների հաջորդ հանդիպման վայրի և ամսաթվի վերաբերյալ պայմանավորվածություն դեռևս առկա չէ: Ինչպես արդեն նշվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տարածված մամուլի հաղորդագրությունում՝ կողմերը համաձայնել են շարունակել լիարժեք կարգավորմանն ուղղված բանակցությունները՝ առանց նախապայմանների: Երկրորդ հանդիպման ամսաթիվն ու վայրը կորոշվի պատշաճ ժամկետում՝ դիվանագիտական ուղիներով:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի հատուկ ներկայացուցիչ Ռուբեն Ռուբինյանին փորձագիտական խորհրդատվություն տրամադրող խումբը ձևավորվել է ԱԳՆ սահմանակից երկրների վարչության հիմքով, ինչպես նաև քննարկումներ են անցկացվում ոլորտային փորձագետների հետ, որոնց անձնական տվյալները չեն կարող տրամադրվել՝ առանց վերջիններիս համաձայնության:

Հարգանքով՝

27.01.2022

X

ՍԵՐՈԲ ԲԵՋԱՆՅԱՆ

[redacted] Սերոբ Բեջանյան
Լրատվության և հանրային
դիվանագիտության վարչության պետ

Լրատվամիջոցների հետ կապի և
հանրային դիվանագիտության բաժին
հեռ. 060620234